

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

28 մարտի 2024 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի Մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝ նախագահող զեկուցող-դատավոր Ա.Ա. Դրոնով, դատավորներ՝ Ա.Ս. Աժիբրախիմովա, Է.Վ. Հայրիյան, Դ.Պ. Ալեքսանդրով, Ա.Ա. Զաբարա, Ե.Ժ. Իսմայիլով, Մ.Տ. Կայիպով, Ա.Բ. Կիշկեմբան, Ն.Վ. Պավլովա, Ա.Գ. Թունյան,

դատական նիստի քարտուղար՝ Ա.Վ. Կորոլյովա,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 68-րդ, 69-րդ, 96-րդ, կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ ըստ դիմումի Տատյանա Իվանի Բրինովայի, Պավել Պյոտրի Միսլիվսկու, Անտոն Ալեքսանդրի Պանովի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի՝ աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված դրույթների պարզաբանման մասին:

I. Դիմումատուների հարցերը եւ գործի հանգամանքները

1. Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ Տ.Ի. Բրինովան, Պ.Պ. Միսլիվսկին, Ա.Ա. Պանովը (այսուհետ՝ դիմումատուներ) «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 32 հավելվածում պարունակվող՝ «Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ Հիմնադրույթ) 53-րդ

և 54-րդ կետերի պարզաբանման մասին դիմումով դիմել են Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան):

2. Ինչպես հետևում է գործի նյութերից, պարզաբանման մասին դիմումով դիմելու պատճառ է հանդիսացել Հիմնադրույթի 53-րդ հոդվածով նախատեսված՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվից Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ձեռքբերման պայմանների փոփոխությունը :

2014 թվականի մայիսի 29-ի խմբագրությամբ Հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եւ Դատարանի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող այն պաշտոնատար անձինք ու աշխատակիցները, որոնք մինչև Հանձնաժողովի եւ Դատարանի կազմում աշխատելը զբաղեցրել են դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոններ, որոնք ազատվել են Հանձնաժողովի եւ Դատարանի կազմում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ մեղավոր գործողությունների հետևանքով աշխատանքից ազատման դեպքերի), եւ որոնք ունեն պետական քաղաքացիական ծառայության առնվազն տասնհինգ տարվա ստաժ, դաշնային պետական քաղաքացիական ծառայողների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն, եթե մինչև Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատանքից ազատվելը դրանցում առնվազն տասներկու ամիս պաշտոն են զբաղեցրել:

2022 թվականի հոկտեմբերի 25-ին ուժի մեջ մտած «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կադրային կազմի ձեւավորման մեխանիզմի հստակեցման մասով փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի օգոստոսի 5-ի արձանագրության համաձայն՝ ընդունվել է Հիմնադրույթի 53-րդ կետի հետևյալ խմբագրությունը.

«Հանձնաժողովի եւ Դատարանի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող այն պաշտոնատար անձինք ու աշխատակիցները, որոնք մինչեւ Հանձնաժողովի եւ Դատարանի կազմում ցանկացած ժամանակահատվածում աշխատելը զբաղեցրել են դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոններ, որոնք ազատվել են Հանձնաժողովի եւ Դատարանի կազմում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ մեղավոր գործողությունների հետեւանքով աշխատանքից ազատման դեպքերի), եւ որոնք ունեն պետական քաղաքացիական ծառայության առնվազն տասնհինգ տարվա ստաժ, դաշնային պետական քաղաքացիական ծառայողների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն, եթե մինչեւ Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատանքից ազատվելը դրանցում առնվազն տասներկու ամիս պաշտոն են զբաղեցրել»:

2022 թվականի մարտի 24-ին ստորագրված եւ 2023 թվականի հունվարի 24-ին ուժի մեջ մտած ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական միության դատարանի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող պաշտոնատար անձանց ու աշխատակիցների կենսաթոշակային ապահովման մասով փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) հիման վրա՝ Հիմնադրույթի 53-րդ կետում փոփոխությունները կատարվել են Հանձնաժողովում եւ Դատարանում պաշտոն զբաղեցնելու տեւողության մասով, որը պահանջվում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

Արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետին համապատասխան ընդունվել է եւ ներկայումս գործում է Հիմնադրույթի 53-րդ կետի առաջին պարբերության նախադասության հետեւյալ խմբագրությունը.

«Հանձնաժողովի եւ Միության դատարանի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող այն պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները, որոնք մինչեւ Հանձնաժողովում եւ Միության դատարանում աշխատելը ցանկացած ժամանակահատվածում զբաղեցրել են Ռուսաստանի Դաշնության պետական ծառայության պաշտոններ, ազատվել են Հանձնաժողովում կամ Միության դատարանում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ մեղավոր գործողությունների հետեւանքով աշխատանքից ազատման դեպքերի), եւ որոնք ունեն համապատասխան տարում պետական քաղաքացիական ծառայության՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայողներին երկարամյա ծառայության համար կենսաթոշակ նշանակելու համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված տեւողությամբ ստաժ, դաշնային պետական քաղաքացիական ծառայողների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված պայմաններով եւ կարգով նշանակվող՝ երկարամյա ծառայության համար կենսաթոշակի իրավունք ունեն, եթե Հանձնաժողովում կամ Միության դատարանում աշխատանքից ազատվելուց անմիջապէս առաջ նրանք առնվազն 3 տարի դրանցում պաշտոն են զբաղեցրել»:

Ընդ որում, Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ Պայմանագրի «Անցումային դրույթներ» XXVII բաժինը լրացվել է «XXVIII բաժնին առնչվող անցումային դրույթներ» 106¹-րդ հոդվածով, որը նախատեսում է Հիմնադրույթի 53-րդ կետով սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի պահպանումը դրանում նշված անձանց շրջանակի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու պետական քաղաքացիական ծառայության ստաժի տեւողության մասով Արձանագրության համաձայն կատարված փոփոխությունները (այդ թվում՝ Հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերած եւ մինչեւ Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրը Հանձնաժողովում կամ Միության դատարանում զբաղեցրած պաշտոններից ազատված անձանց համար (Պայմանագրի 106¹-րդ հոդվածի երկրորդ պարբերություն)):

3. Սույն գործի շրջանակներում Դատարանը քննում է հետևյալ հարցերը, որոնք իմաստով համապատասխանում են պարզաբանման մասին դիմումի առաջին, չորրորդ եւ հինգերորդ կետերում պարունակվող հարցերին:

3.1. Պարզաբանման մասին դիմումի առաջին կետում դիմումատուները խնդրում են պարզաբանել Հիմնադրույթի 53-րդ կետի կիրառումն այն իրավիճակի նկատմամբ, երբ Միության մարմնի պաշտոնատար անձը կամ աշխատակիցը Միության այդ մարմնից ազատվել է նշված կետի այն խմբագրության գործողության ընթացքում, որով նախատեսվել է Միության մարմնում տասներկու ամիս տեւողությամբ աշխատանքային ստաժի առկայությունը, իսկ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ Դատարանի նախագահի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին միջնորդագիրն անդամ պետության լիազորված մարմին է ուղարկվել այն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից հետո (2023 թվականի հունվարի 24-ին), որի հիման վրա ընդունվել է Հիմնադրույթի 53-րդ կետի նոր խմբագրությունը, որով Միության մարմիններում երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող աշխատանքի ժամանակահատվածի տեւողությունը տասներկու ամսից ավելացվել է մինչեւ երեք տարի: Ընդ որում, դիմումատուները հղում են կատարում «համաիրավական սկզբունքին, որով արգելվում է սուբյեկտների վիճակը վատթարացնող նորմի հետադարձ ուժով կիրառումը», որը, ըստ նրանց, ամրագրված է Միության անդամ պետությունների ազգային սահմանադրություններում եւ այլ նորմատիվ իրավական ակտերում, ինչպես նաեւ Պայմանագրի թիվ 1 հավելվածը հանդիսացող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին հիմնադրույթի 17-18-րդ կետերում:

3.2. Պարզաբանման մասին դիմումի չորրորդ կետում դիմումատուները խնդրում են պարզաբանել հետևյալ հարցը, արդյո՞ք Դատարանի պաշտոնատար անձանց կամ աշխատակիցների լիազորությունների կատարման ժամանակահատվածը հաշվառվում է այն անդամ պետության պետական ծառայության ստաժում, որի քաղաքացիներն են այդ անձինք՝ հաշվի առնելով, որ Հիմնադրույթի 53-րդ կետի առաջին պարբերությունում Հանձնաժողովում եւ

Դատարանում աշխատելու տեւողության մասին պահանջը ձեւակերպված է որպէս Միության մարմիններում «պաշտոնների ստանձնում այն դեպքում, երբ Հիմնադրույթի 54-րդ կետում գործածվում է պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների «աշխատելու ժամանակահատված» հասկացությունը, որը ենթակա է ներառման այն անդամ պետության պետական քաղաքացիական ծառայության ստաժում, որի քաղաքացին են նրանք, այդ թվում՝ պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

3.3. Պարզաբանման մասին դիմումի հինգերորդ կետում դիմումատուները հարց են բարձրացնում հետեւյալի վերաբերյալ՝ «Էլնելով Միության մարմիններում աշխատանքային հարաբերությունների պրակտիկայից»՝ պետական ծառայության ստաժում, Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերին համապատասխան, ներառվում է արդյոք Հանձնաժողովում կամ Դատարանում համապատասխան պաշտոնում որպէս «պարտականությունները կատարող» աշխատելու ժամանակահատվածը:

4. Պարզաբանման մասին դիմումով Դատարան դիմելուն նախորդել են հետեւյալ հանգամանքները:

Դիմումատու Տ.Բ. Բրինովան 2015 թվականի նոյեմբերի 2-ից 2016 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Դատարանի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 57 հրամանի եւ 2015 թվականի նոյեմբերի 2-ի աշխատանքային պայմանագրի հիման վրա զբաղեցրել է Դատարանի դատավորի օգնականի պաշտոնը, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում Դատարանի նախագահի 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 18-1 հրամանի եւ 2016 թվականի նոյեմբերի 29-ի աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է Դատարանի քարտուղարության փորձագիտական-վերլուծական բաժնի խորհրդատուի պարտականությունները: Նշված ժամանակահատվածում դիմումատուն սահմանված կարգով հավատարմագրվել է Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից եւ որպէս Դատարանի աշխատակից օգտվել է համապատասխան արտոնություններից եւ անձեռնմխելիություններից:

Դատարանի կողմից դիմումատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրերով նրա նկատմամբ նախատեսվել է «Պայմանագրի եւ Եվրասիական տնտեսական միության դատարանի կազմավորման եւ գործունեության կանոններին համապատասխան դատարանի աշխատակցի կենսաթոշակային եւ սոցիալական ապահովության իրականացումը»: Դիմումատուի աշխատանքի (այդ թվում՝ որպես Դատարանի քարտուղարության փորձագիտական-վերլուծական բաժնի խորհրդատուի պարտականությունները կատարող) ժամանակահատվածում Դատարանը, Հիմնադրույթի 44-րդ կետին համապատասխան, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով ամբողջ ծավալով կատարել է դիմումատուի՝ որպես Դատարանի աշխատակցի՝ նրա քաղաքացիության պետության կենսաթոշակային ֆոնդին կենսաթոշակային ապահովման գծով ապահովագրավճարների հատկացումների իր պարտականությունները: Դատարանի նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-1 հրամանով Տ.Ի. Բրինովան 2017 թվականի դեկտեմբերի 29-ին ազատվել է Դատարանի քարտուղարության փորձագիտական-վերլուծական բաժնի խորհրդատուի պարտականությունների կատարումից աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով:

Դատարանի կողմից ստացված՝ 2023 թվականի փետրվարի 2-ով թվագրված՝ դիմումատուի համապատասխան դիմումի առնչությամբ Դատարանի նախագահը, Հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան, Ռուսաստանի Դաշնության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարություն է ուղարկել միջնորդագիր՝ դիմումատուին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին (Դատարանի նախագահի 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ 5-3-9/3 գրություն): Վերը նշված նախարարությունը մերժել է դիմումատուի երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ճանաչումը, որի մասին Դատարանին ծանուցել է 2023 թվականի մարտի 8-ի թիվ 21-4/10/В-3121 գրությամբ: Այդ որոշումը դիմումատուի կողմից բողոքարկվել է դատական կարգով:

5. Պարզաբանման մասին քննվող դիմումով Դատարան դիմելու պահի (29 դեկտեմբերի 2023 թվական) դրությամբ դիմումատուներ Պ.Պ. Միսլիվսկին եւ

Ա.Ա. Պանոփը Դատարանի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են գտնվել:

II. Ընթացակարգը Դատարանում

6. Դատարանի մեծ կոլեգիայի 2024 թվականի հունվարի 30-ի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ այն հարցերի մասով, որոնք շարադրված են պարզաբանման մասին դիմումի 1-ին, 4-րդ եւ 5-րդ կետերում:

7. Դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն (այսուհետ՝ Ստատուտ), որը հանդիսանում է Պայմանագրի թիվ 2 հավելվածը , պարզաբանման գործերով քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

8. Գործը քննության նախապատրաստելու շրջանակներում Կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով հարցումներ են ուղարկվել Միության անդամ պետությունների բարձրագույն դատական մարմիններ, սահմանադրական վերահսկողության մարմիններ, լիազորված այլ մարմիններ, դրանց ազգային գիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ (Բ. Կանտի անվան Բալթյան դաշնային համալսարան, Բելառուսի պետական համալսարան, Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (համալսարանի) Եվրասիական ուսումնական ինստիտուտ, Երեւանի պետական համալսարան, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պետության եւ իրավունքի ինստիտուտ, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտ, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտ, Կազանի (Պրիվոլժեի) դաշնային համալսարան, Բ.Ն. Ելցինի անվան

Ղրղզա-ռուսական սլավոնական համալսարան, Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, Օ.Ե. Կուտաֆինի անվան Մոսկվայի պետական իրավաբանական համալսարան, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողով եւ մի շարք միջազգային կազմակերպություններ (Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարան, Միավորված ազգերի կազմակերպության վերաքննիչ տրիբունալ, Աշխատանքի միջազգային կազմակերպության վարչական տրիբունալ, Ծովային իրավունքի միջազգային տրիբունալ, Ասիական զարգացման բանկի վարչական տրիբունալ, Աֆրիկյան զարգացման բանկի վարչական տրիբունալ, Աֆրիկյան միության վարչական տրիբունալ, Արեւմտաաֆրիկյան պետությունների տնտեսական համայնքի դատարան):

Ի պատասխան Դատարանի հարցմանը՝ Ստատուտի 75-րդ կետի կարգով դիմումատու Ս.Ի. Բրինովայի եւ Դատարանի քարտուղարության կողմից ներկայացվել են գործի հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրության եւ գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերի եւ նյութերի պատճեններ**III**.

Դատարանի եզրահանգումները

9. Սույն խորհրդատվական եզրակացության առարկան Դատարանի կողմից Ստատուտի 46-րդ կետով նախատեսված պարզաբանում ներկայացնելն է դիմումի մեջ նշված՝ աշխատանքային հարաբերությունների հետ կապված Պայմանագրի նորմերի (Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետեր) վերաբերյալ: Այդ կապի առկայությունը, առաջինը՝, պայմանավորված է նրանով, որ Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների՝ նշված դրույթների կարգավորման առարկա հանդիսացող (կենսաթոշակային ապահովման բնագավառում սոցիալական երաշխիքների տրամադրում) իրավահարաբերությունները Միության այդ մարմինների հետ, Պայմանագրին համապատասխան, չեն ծագում այլ կերպ, քան միայն Միության մարմինների հետ այդ անձանց աշխատանքային հարաբերությունների սահմանման հիման վրա : Երկրորդը՝ վերը նշված սոցիալական երաշխիքների առկայությունն այլ սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիությունների հետ

միասին, Պայմանագրին համապատասխան, հանդիսանում են Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների՝ որպէս միջազգային ծառայողների, կարգավիճակի անբաժանելի տարրը, որը, ի թիվս այլնի, ամրագրվում է Միության մարմինների հետ նրանց աշխատանքային պայմանագրերում:

Դրանով պայմանավորված՝ հաշվի առնելով Ստատուտի 46-րդ կետի դրույթները, Դատարանի իրավասությանն է վերապահվում Հանձնաժողովի եւ Դատարանի աշխատակիցների ու պաշտոնատար անձանց դիմումների առնչությամբ պարզաբանումների տրամադրումը, որոնք վերաբերում են Միության այդ մարմիններում նրանց միջազգային ծառայության պայմաններին առնչվող Պայմանագրի դրույթներին, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովման բնագավառում սոցիալական երաշխիքների տրամադրումը կարգավորող Հիմնադրույթի կետերին, ներառյալ՝ 53-րդ եւ 54-րդ կետերը:

10. Մեծ կոլեգիան, հաշվի առնելով ստացված դիմումի բովանդակությունը, քննվող գործի հանգամանքները եւ Դատարանի պրակտիկան (թիվ P-5/17 գործով 2017 թվականի դեկտեմբերի 11-ի եւ թիվ P-5/18 գործով 2018 թվականի դեկտեմբերի 20-ի խորհրդատվական եզրակացություններ), դեկլարավելով Ստատուտի 2-րդ կետով, նպատակահարմար է համարում սույն Խորհրդատվական եզրակացության մեջ պարզաբանել ոչ միայն Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի նշանակությունը և դրանց կիրառումը դիմումատուների կոնկրետ հանգամանքների նկատմամբ կիրառելով *in concreto* մեկնաբանումը (սույն Խորհրդատվական եզրակացության 17-20-րդ կետեր), այլ նաեւ տալ պարզաբանում՝ հիմնվելով *ընդհանուր բնույթի* որոշ արդիական հարցերի համակարգային վերլուծության վրա, որոնք մասնավորապէս վերաբերում են Միության իրավունքի եւ անդամ պետությունների ազգային օրենսդրության հարաբերակցությանը, այդ թվում՝ ուսումնասիրվող իրավական կարգավորման բնագավառի՝ Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովման սոցիալական երաշխիքների (սույն Խորհրդատվական եզրակացության 11-16-րդ կետեր) առնչությամբ դրանց կիրառման վերաբերյալ:

11. Այդ կապակցությամբ մեծ կոլեգիան նշում է, որ միջազգային կազմակերպությունների ստեղծման եւ գործունեության միջազգային պրակտիկայի լույսի ներքո Եվրասիական տնտեսական միության առանձնահատկությունն այն է, որ Պայմանագրին համապատասխան Միության միջազգային ծառայողների, ներառյալ՝ Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները «կարգավորվում են գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն Հիմնադրույթի նորմերը» (Հիմնադրույթի 43-րդ կետ), իսկ նրանց կենսաթոշակային ապահովումն «իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են նրանք»:

Այսպիսով, հարաբերությունների նշված բնագավառում (որը սովորաբար միջազգային կազմակերպության հիմնադիր ակտի եւ դրա վրա հիմնված կանոնների կարգավորման առարկան է) Պայմանագրի (Միության իրավունք) վրա հիմնված միջազգային իրավակարգը սերտորեն փոխգործակցում է յուրաքանչյուր եւ բոլոր անդամ պետությունների ազգային իրավակարգերի հետ: Նման կարգավորումն իր ազդեցությունն ունի միջազգային ծառայողների կարգավիճակը կանոնակարգող Միության իրավունքի նորմերի, այդ թվում՝ Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի միատեսակ մեկնաբանման եւ կիրառման վրա:

Այդ կապակցությամբ սույն գործը քննելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել Պայմանագրի կիրառման ոլորտում ԵԱՏՄ իրավունքի եւ ազգային օրենսդրության հարաբերակցության վերլուծությանն ու Միության՝ որպես միջազգային կազմակերպության, իրավական բնույթին, ինչպես նաև դրա գործունեության իրավական կարգավորման առանձնահատկություններին:

12. Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի նորմերով սահմանվում են Միության միջազգային ծառայողների իրավունքների ապահովման բնագավառում անդամ պետությունների միջազգային պարտավորությունները, որոնք Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թվականի մայիսի 23-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 26-րդ հոդվածում ամրագրված համընդհանուր ճանաչված *pacta sunt servanda* սկզբունքի հիման վրա ենթակա են

անդամ պետությունների կողմից բարեխղճորեն կատարման: Վիեննայի կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակիցը որպես պայմանագիրը չկատարելու արդարացման պատճառաբանություն չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները»: Այն դեպքում, երբ Պայմանագրով սահմանվում են այլ պայմաններ, քան նախատեսված են անդամ պետության ազգային օրենսդրությամբ, կիրառվում են Պայմանագրով նախատեսված կանոնները:

13. Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի նորմերը գործում են անդամ պետությունների ընդհանուր շահերի ոլորտում, որը վերաբերում է Միության ինստիտուտների եւ դրա շրջանակներում ստեղծված միջազգային ծառայության արդյունավետ ու անկախ գործունեության ապահովմանը: Անդամ պետությունների կողմից Միության իրավունքի նորմերի, այդ թվում՝ Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի միատեսակ մեկնաբանման եւ կիրառման ապահովումը, ելնելով Պայմանագրի 107-րդ հոդվածից, Միության՝ որպես միջազգային կազմակերպության, գործունեության ինստիտուցիոնալ ամբողջականության եւ արդյունավետ գործունեության պայմանն է:

Այդ կապակցությամբ Մեծ կոլեգիան եզրահանգում է, որ ազգային օրենսդրությունը եւ անդամ պետություններում՝ Միության միջազգային ծառայողների սոցիալական երաշխիքների բնագավառում, դրա կիրառման պրակտիկան պետք է համապատասխանեն Հիմնադրույթի նորմերին եւ չհակասեն դրան: Որեւէ անդամ պետության կողմից Հիմնադրույթի կանոնակարգման ոլորտում ազգային օրենսդրության ակտերի ընդունումը, ինչպես նաեւ դրա կիրառման պրակտիկան, որը ենթադրում է Պայմանագրի նորմերի գործողության սահմանափակում կամ չեղարկում, կհակասեր Պայմանագրով դրա միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ դրա 3-րդ հոդվածին, որին համապատասխան՝ անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Միության կողմից իր գործառույթների իրականացման համար:

14. Հիմնադրույթի «Միության մարմիններում աշխատանքային հարաբերությունները եւ սոցիալական երաշխիքները» V բաժնի նորմերը նաեւ ենթադրում են Պայմանագրով նախատեսված սոցիալական երաշխիքները ազգային

օրենսդրությունում անդամ պետությունների կողմից կիրարկելու պարտավորությունն այն անձանց նկատմամբ դրանք հետագայում իրագործելու նպատակով, որոնց վրա դրանք տարածվում են:

Նշված կիրարկումն ուղղված է Պայմանագրի այն նորմերի միատեսակ մեկնաբանման եւ կիրառման ապահովմանը, որոնց կարգավորման առարկան է հանդիսանում Միության միջազգային ծառայության ինստիտուտն ու դրա միջազգային ծառայողների կարգավիճակը:

Անդամ պետության օրենսդրությունում Պայմանագրին համապատասխան Միության միջազգային ծառայողների կարգավիճակը կանոնակարգող նորմերի բացակայության դեպքում համապատասխան ակտերն ընդունում են նրանց քաղաքացիության պետություններն համակարգելով միմյանց հետ ազգային մակարդակով՝ Միության միջազգային ծառայողների ազգության կամ քաղաքացիության հատկանիշներով իրավունքների անհավասարության կանխարգելման եւ Հիմնադրությամբ նախատեսված սոցիալական երաշխիքների իրագործման ապահովման նպատակով:

15. Հիմնադրությի 53-րդ եւ 54-րդ կետերի մեկնաբանման եւ կիրառման ժամանակնակն պետք է հաշվի առնել Միության՝ որպես միջազգային կազմակերպության կարգավիճակը, որը Պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ կետին, Հիմնադրությի II եւ III բաժիններին համապատասխան ունի միջազգային իրավասուբյեկտություն եւ գործառությանին անձեռնմխելիություն: Ինչպես նշել է Դատարանն իր *2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ P-5/17 խորհրդատվական եզրակացության* մեջ, Միության միջազգային իրավական կարգավիճակը ենթադրում է սեփական անձնակազմի հետ փոխհարաբերությունների՝ իր կողմից ինքնուրույն կարգավորում, իսկ իր հիմնադիր պայմանագիրը գործում է որպես հիմնարար իրավական ակտ իր ներքին կազմակերպության կարգավորման հարցում (15-րդ կետ): Քանի որ հղումն ազգային օրենսդրությանը պարունակվում է հենց Պայմանագրում, որի նորմերով կանոնակարգվում է միջազգային ծառայողների մասնակցությամբ իրավահարաբերությունների համալիրը, ազգային օրենսդրության նորմերը կիրառվում են նշված անձանց իրավական կարգավիճակի՝

Միության իրավունքով չկարգավորված տարրերի նկատմամբ եւ այնպես, որ դրանով չշոշափվի Հիմնադրույթի 2-րդ եւ 3-րդ կետերում ամրագրված՝ միջազգային ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների, գործառույթների անկախ ու արդյունավետ կատարման եւ իրենց միջազգային բնույթի լիազորությունների անշեղորեն պահպանման սկզբունքների գործողությունը:

16. Մեծ կոլեգիան նաեւ եզրահանգում է, որ Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի նորմերը, որոնցով սահմանվում են Միության մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կենսաթոշակային ապահովման բնագավառում սոցիալական երաշխիքները, Հիմնադրույթով նախատեսված մյուս սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիությունների հետ միասին իրենցից ներկայացնում են Միության միջազգային ծառայողների կարգավիճակի եւ Միության միջազգային ծառայության ինստիտուտի անբաժանելի տարրը:

Ընդ որում, Միության միջազգային ծառայողների սոցիալական երաշխիքների ծավալը եւ նորմատիվ բովանդակությունը, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովման բնագավառում, պայմանավորված են անդամ պետությունների կողմից նրանց վերապահված գործառույթների հանրային բնույթով եւ դրա հետ կապված՝ նրանց մասնագիտական որակավորմանը, գործնական եւ անձնական որակներին, ներառյալ՝ Պայմանագրի առարկա կազմող գործունեության ոլորտներում հատուկ գիտելիքներին եւ փորձին ներկայացվող պահանջներով, ինչպես նաեւ միջազգային ծառայություն անցնելու հետ կապված սահմանափակումներով: Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցներին ներկայացվող նման պահանջների մակարդակը որոշելիս չեն կարող հաշվի չառնվել նաեւ որակավորման պահանջները, որոնք Պայմանագրի հիման վրա կիրառվում են Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ Դատարանի դատավորների նկատմամբ (որոնց գործունեությունը կոչված են ապահովելու Միության այդ մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները):

17. Պատասխանելով դիմումի առաջին կետում դրված հարցին՝ Մեծ կոլեգիան նշում է, որ 53-րդ եւ 54-րդ կետերը կենսաթոշակային ապահովման բնագավառում Միության միջազգային ծառայողների կողմից սոցիալական երաշխիքների ձեռքբերումը կարգավորող Հիմնադրույթի այլ նորմերի հետ փոխկապակցվածությամբ (որոնք կիրառելի են Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նկատմամբ՝ Հիմնադրույթի 44-րդ, 46-րդ, 47-րդ եւ 54-րդ կետեր) սահմանում են դրանցում նշված Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցներին կենսաթոշակային ապահովման բնագավառում սոցիալական երաշխիքների տրամադրման նյութաիրավական եւ առանձին ընթացակարգային պայմանները:

Ընդ որում, Միության միջազգային ծառայողների աշխատանքային հարաբերությունները եւ կենսաթոշակային ապահովման բնագավառում սոցիալական երաշխիքները կարգավորող Հիմնադրույթի նորմերի (43-րդ, 44-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ, 53-րդ եւ 54-րդ կետեր) համակարգային մեկնաբանումը հաստատում է այն եզրահանգումը, որ Հիմնադրույթի 53-րդ կետը հատուկ բնույթ է կրում այն առումով, որ 1) ըստ իրավախախտման սուբյեկտի գործոնի (*ratione personae*)՝ դրա կիրառման ոլորտը սահմանափակվում է Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանցով ու աշխատակիցներով, որոնք Ռուսաստանի Դաշնության քաղաքացի են, 2) դրանով սահմանվում են Միության մարմիններում միջազգային ծառայողների մոտ Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակային ապահովման կոնկրետ տեսակի՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի, իրավունքի ծագման նյութաիրավական եւ առանձին ընթացակարգային պայմաններ:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվից Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց, աշխատակիցների՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի ձեռքբերման պայմանների շարքին են դասվել մասնավորապես պետական քաղաքացիական ծառայության ստաժի ընդհանուր տեւողությանը (տասնհինգ տարի), ներառյալ՝ ազատվելուց անմիջապես առաջ

Հանձնաժողովում եւ Դատարանում առնվազն տասներկու ամսվա աշխատանքի ժամանակահատվածին ներկայացվող՝ Պայմանագրով սահմանված պահանջները, որոնք ամրագրվել են Հիմնադրույթի 53-րդ կետի սկզբնական խմբագրությունում, իսկ հետագայում Արձանագրությամբ ճշգրտման կարգով ավելացվել են:

Մեծ կոլեգիան նշում է, որ Հիմնադրույթի 53-րդ կետի նորմը ինչպես նախորդ, այնպես էլ գործող խմբագրությամբ, Պայմանագրի 106¹-րդ հոդվածի հետ փոխկապվածության մեջ շարադրված է պարզ եւ հստակ, ուղղակի գործողության նորմ է եւ այն անձանց մոտ, որոնց վրա տարածվում է այդ գործողությունը, երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման հիմք է ստեղծում:

Նշված նյութաիրավական պայմանների կատարումն ապահովող հանգամանքների ի հայտ գալու դեպքում միջազգային ծառայողի մոտ Պայմանագրի ուժով երկարամյա ծառայության իրավունք է ծագում: Դրա ծագման պահից տվյալ իրավունքն ըստ էության «ձեռք բերված իրավունք է», որի իրացումը պայմանավորված չէ Պայմանագրի եւ դրա վրա հիմնված Միության իրավունքի ակտերի հնարավոր փոփոխություններով:

Մեծ կոլեգիան այդ կապակցությամբ հիմնավորված է համարում եւ պարզաբանման մասին ստացված դիմումի քննության ժամանակ հաշվի է առնում միջազգային դատական մարմինների, մասնավորապես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության վարչական տրիբունալի պրակտիկայում ձեւավորված մոտեցումը, համաձայն որի, կենսաթոշակային իրավունքները դասվում են «ձեռք բերված իրավունքների» կատեգորիային եւ ենթակա են իրացման դրանք տիրապետողի կողմից՝ անկախ այդ իրավունքները կարգավորող նորմատիվ փաստաթղթերի տեքստում կատարված որեւէ փոփոխությունից (Lamadie-ի գործով 1978 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 365 որոշում (10-րդ կետ) եւ Biggio-ի գործով 1978 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 366 որոշում (10-րդ կետ)):

Այսպիսով, Հանձնաժողովի եւ Միության դատարանի պաշտոնատար անձինք ու աշխատակիցները, որոնք մինչ եւ 2023 թվականի հունվարի 24-ը գործող խմբագրությամբ Հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան ձեռք են բերել

երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք եւ Հանձնաժողովում եւ Միության դատարանում զբաղեցրած պաշտոններից ազատվել են (բացառությամբ մեղավոր գործողությունների հետեւանքով աշխատանքից ազատման դեպքերի), երկարամյա ծառայության կենսաթոշակի իրենց իրավունքը պահպանում են նախկին պայմաններով:

Ընդ որում, Պայմանագիրը եւ Միության այլ ակտեր չեն սահմանում ժամկետ, որի ընթացքում Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը կամ Դատարանի նախագահը (նրանց նախաձեռնությամբ կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձի միջնորդությամբ) պետք է Հիմնադրույթի 53-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված միջնորդագիրն ուղարկի Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմին:

18. Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հոդվածում կողմիֆիկացված՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող նորմին համապատասխան, քանի որ պայմանագրից այլ մտադրություն չի հետեւում կամ այլ կերպ պարզված չէ, պայմանագրի դրույթները պայմանագրի մասնակցի համար պարտադիր չեն ցանկացած գործողության կամ փաստի առնչությամբ, որոնք տվյալ մասնակցի համար եղել են մինչեւ պայմանագիրն ուժի մեջ մտնելը, կամ ցանկացած իրավիճակի առնչությամբ, որը դադարել է գոյություն ունենալ մինչեւ այդ ամսաթիվը

Այդ կապակցությամբ մեծ կոլեգիան նշում է, որ Արձանագրությունը, որը նախատեսել է Հիմնադրույթի 53-րդ կետում այնպիսի փոփոխությունների կատարում, որոնք դիմումատուի մեկնաբանմամբ վատթարացրել են նրա դրությունը, չի պարունակում այնպիսի նորմեր, որոնք կնախատեսեին մինչեւ վերը հիշատակված Արձանագրությունն ուժի մեջ մտնելը (այսինքն՝ մինչեւ 2023 թվականի հունվարի 24-ը) ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման մասով այդ փոփոխությունների պարտադիր լինելը:

Վերը հիշատակված Արձանագրության բովանդակության վերլուծությունն ընդհակառակն թույլ է տալիս եզրահանգել, որ մասնակից պետությունները,

համապատասխանեցնելով իրենց սահմանադրական իրավակարգերի, իրավական որոշակիության, պետական իշխանության նկատմամբ վստահության եւ իրավական կարգավորման կայունության սկզբունքների հետ, Պայմանագրի տեքստը լրացրել են «XXVIII բաժնին առնչվող անցումային դրույթները» 106¹-րդ հոդվածով, որը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը պետք է կիրառվի Հիմնադրույթի 53-րդ կետով նախատեսված կարգով՝ առանց հաշվի առնելու պետական քաղաքացիական ծառայության ստաժի տեւողության մասով փոփոխությունները, որոնք կատարվել են Արձանագրությամբ, եւ այն ուժի մեջ մտնելուց հետո:

Ելնելով Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի համակարգային մեկնաբանությունից՝ Մեծ կոլեգիան արձանագրում է Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցներին երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժի ընդհանուր տեւողությունը որոշելու մասով դրանց փոխլրացումը: Քանի որ Հիմնադրույթի 54-րդ կետին համապատասխան Միության մարմնի պաշտոնատար անձ եւ/կամ աշխատակից աշխատելու ժամանակահատվածը ներառվում է պետական քաղաքացիական ծառայության ստաժի ընդհանուր տեւողության մեջ, Պայմանագրի 106¹-րդ հոդվածում գործածվող «պետական ծառայության ստաժի տեւողության մասով փոփոխությունները» հասկացությունը պետք է հասկանալ որպես աշխատանքային ստաժի նաեւ այն մասին վերաբերող, որը բառի բուն իմաստով պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժ է, եւ այն մասին, որն ընդգրկում է Միության այդ մարմիններում Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձի, աշխատակցի աշխատելու ժամանակահատվածը:

Դատարանը նաեւ հաշվի է առնում թիվ P-5/18 գործով 2018 թվականի դեկտեմբերի 20-ի խորհրդատվական եզրակացության մեջ շարադրված իրավական դիրքորոշումը, համաձայն որի, Միության կողմից երաշխավորված՝ մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների մակարդակը չի կարող լինել

ավելի ցածր, քան դա ապահովվում է անդամ պետություններում, եւ այդ հիմքով եզրահանգում է, որ Միության նախկին միջազգային ծառայողի նկատմամբ ենթակա չէ նրա իրավական դրությունը վատթարացնող նորմատիվ կարգավորման ռետրոակտիվ կիրառումը:

Մեծ կոլեգիան նաեւ նշում է, որ դիմումատուներ Պ.Պ. Միսլիվսկուն եւ Ա.Ա. Պանովին առնչվող մասով պարզաբանման մասին դիմումի 1-ին կետում բարձրացված հարցն առարկայազուրկ է, քանի որ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման նյութաիրավական պայմանները, որոնք սահմանվել էին մինչեւ վերը հիշատակված Արձանագրությունն ուժի մեջ մտնելը գործող Հիմնադրույթի 53-րդ կետի խմբագրությամբ, նրանց նկատմամբ կիրառելի չեն:

19. Պատասխանելով պարզաբանման մասին դիմումի չորրորդ կետում դրված հարցին՝ Դատարանը նշում է, որ Հիմնադրույթի 53-րդ կետի տեքստից պարզ հետեւում է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների թվից Միության միջազգային ծառայողների մոտ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագումը կապված է Հանձնաժողովում եւ Միության դատարանում նրանց պաշտոնները ստանձնելու հետ, ինչն ամրագրված է թիվ P-2/17 գործով 2017 թվականի սեպտեմբերի 12-ի խորհրդատվական եզրակացության մեջ արտահայտված իրավական դիրքորոշման մեջ, համաձայն որի, «պաշտոնի ստանձնում» եւ «պաշտոնի զբաղեցում» հասկացություններն ըստ ծավալի եւ բովանդակության Դատարանը ճանաչել է հավասար նշանակություն ունեցող:

Հիմնադրույթի 54-րդ կետում, իր հերթին, գործածվում է Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների «աշխատելու ժամանակահատված» հասկացությունը, որը, նշված կետին համապատասխան, ենթակա է ներառման այն անդամ պետության պետական քաղաքացիական ծառայության ստաժում, որի քաղաքացիներն են նրանք, այդ թվում՝ պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար:

Միության իրավունքը չի պարունակում պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների «աշխատելու ժամանակահատված» եզրույթի սահմանումը: Ելնելով Հանձնաժողովի եւ Դատարանի ստեղծված պրակտիկայից՝ դատարանը համարում է, որ նշված եզրույթի տակ պետք է հասկանալ պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հիման վրա՝ նրանց աշխատանքային գործունեության ընդհանուր տեւողությունը: Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի համատեքստային մեկնաբանությունից հետեւում է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների լիազորությունների կատարման ժամանակահատվածը ներառվում է այդ անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, այդ թվում՝ պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման նպատակով:

Մեծ կոլեգիան եզրահանգում է, որ Հիմնադրույթի 54-րդ կետը տարածվում է Միության բոլոր անդամ պետությունների քաղաքացիների վրա, չի պարունակում որեւէ պայման՝ Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատելու ժամանակահատվածները պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում ներառելու համար, եւ համապատասխանաբար կիրառելի է այն անձանց նկատմամբ, որոնք մինչ Միության մարմիններում աշխատելը պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժ չեն ունեցել:

20. Պարզաբանման մասին դիմումի հինգերորդ կետում դրված հարցին պատասխանելիս մեծ կոլեգիան արձանագրում է, որ հաշվի առնելով սույն Խորհրդատվական եզրակացության 4-րդ կետում նկարագրված գործի հանգամանքները՝ այն վերաբերում է միայն դիմումատուներից մեկի հետ Դատարանի աշխատանքային հարաբերություններին, որը Հիմնադրույթի 53-րդ կետի նախորդ խմբագրության գործողության ժամանակահատվածում կատարել է Դատարանի աշխատակցի պարտականությունները Դատարանի քարտուղարության փորձագիտական-վերլուծական բաժնի խորհրդատուի պաշտոնում:

Մեծ կոլեգիան համարում է, որ համապատասխան անձին (աշխատողին) Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերին համապատասխան աշխատանքային ստաժի սահմանման ու կենսաթոշակի նշանակման նպատակների համար որոշիչ նշանակություն ունի Պայմանագրից բխող հետեւյալ պայմանների պահպանումը՝ 1) այդ անձի մոտ Միության մարմնի հետ որպէս Միության մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատակցի աշխատանքային գործառույթների կատարում նախատեսող աշխատանքային պայմանագրի առկայությունը, ինչպէս նաեւ Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ այդ անձի նկատմամբ որպէս Միության մարմնի պաշտոնատար անձի եւ աշխատակցի կենսաթոշակային ու սոցիալական ապահովման իրականացման՝ Միության մարմնի պարտականությունը. 2) նշված աշխատանքային պայմանագրի կողմերի կողմից դրանում նախատեսված փոխադարձ պարտականությունների փաստացի իրականացում, ներառյալ՝ Միության մարմնի պաշտոնատար անձանց կամ աշխատակիցների համար սահմանված կարգով եւ պայմաններով Միության մարմնի կողմից այդ անձի կենսաթոշակային ապահովման համար պարտադիր հատկացումների մասին պահանջի կատարում (Հիմնադրույթի 44-րդ կետ):

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ մեծ կոլեգիան եզրահանգում է, որ նշված պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում Հանձնաժողովի կամ Դատարանի պաշտոնատար անձի, աշխատակցի Հանձնաժողովում կամ Դատարանում համապատասխան պաշտոնում որպէս «պաշտոնակատար» աշխատելու ժամանակահատվածը Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերին համապատասխան ու երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման նպատակների համար ենթակա է հաշվառման պետական ծառայության ստաժում:

21. Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ մեծ կոլեգիան պարզաբանում է.

21.1. Հանձնաժողովի եւ Դատարանի այն պաշտոնատար անձինք ու աշխատակիցները, որոնք մինչեւ 2023 թվականի հունվարի 24-ը գործող խմբագրությամբ Հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան ձեռք են բերել երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք եւ ազատվել են

(բացառությամբ մեղավոր գործողությունների հետեւանքով աշխատանքից ազատման դեպքերի) Հանձնաժողովում կամ Դատարանում զբաղեցնող պաշտոններից, երկարամյա ծառայության կենսաթոշակի իրենց իրավունքը պահպանում են նախկին պայմաններով, այդ թվում՝ Հանձնաժողովում եւ Դատարանում առնվազն տասներկուամսյա աշխատանքային ստաժի տեւողության մասին պահանջի առնչությամբ՝ անկախ այդ անձանց կողմից նշված իրավունքի իրացման եւ անդամ պետության լիազորված մարմին Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ Դատարանի նախագահի կողմից միջնորդագրի ներկայացման ամսաթվից:

21.2. Հիմնադրույթի 54-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց, աշխատակիցների՝ այդ մարմիններում աշխատելու ժամանակահատվածը ներառվում է այն անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, որի քաղաքացիներն են նրանք, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման նպատակներով: Ընդ որում, Հանձնաժողովի եւ Միության դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների՝ այդ մարմիններում «աշխատելու ժամանակահատվածը» (Հիմնադրույթի 54-րդ կետ) իմաստով հավասարազոր է նշված անձանց կողմից այդ մարմիններում «պաշտոնների զբաղեցման» ժամանակահատվածին (Հիմնադրույթի 53-րդ կետ):

21.3. Հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերի կիրառման նպատակներով որպես Հանձնաժողովի եւ Միության Դատարանի պաշտոնատար անձի, աշխատակցի «պաշտոնակատար» աշխատելու ժամանակահատվածը ներառվում է այն անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, որի քաղաքացիներն են նրանք:

IV. Եզրափակիչ դրույթներ

22. Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել
դիմումատուներին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական
ինտերնետային կայքում:

Նախագահող դատավոր-զեկուցող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրահմովա

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Ա.Ա. Զաբարա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաեւ

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան